

# Խաբահրական

Հայաստանն այսօր հայտնվել է ժողովրդագրական համադետի անդունդում: Անկախության ձեռքբերումից հետո անցած տասնհինգ տարիների ընթացքում երկրից արտագաղթել է ավելի քան մեկ միլիոն մարդ, թեև վերջին տարիներին արտագաղթի հոսքը որոշ չափով նվազել է, սակայն դադարելու միտում բնավ չունի: Բնական աճի ցուցանիշները բացասական են, ծնելիության մակարդակը չի կարող ապահովել անգամ բնակչության առկա թվի պարզ վերարտադրությունը:

Ցավալի է արձանագրել, որ հայ ժողովուրդը ժողովրդագրական առումով տանուլ է տվել իր բոլոր մահմեդական հարեաններին:

Հայաստանի ընկերային-տնտեսական զարգացման ռազմավարության հիմքում, թերևս, դրված է մեր երկիրը որպես աշխարհասփյուռ հայության ամառանոց, ծերանոց, գերեզմանոց, պահեստային հանգրվան եւ զբոսաշրջիկական հանգստավայր դիտարկելը: Ըստ այդ «տեսլականի» էլ խթանվում են ներդրումներն զբոսաշրջիկության ենթակառույցների վերակառուցման, արդիականացման, նորերի ստեղծման, էլիտար բնակարանաշինության, գվարճանքի վայրերի, սրճարանների եւ ռեստորանների ստեղծման ոլորտներում: Այդպիսի մոտեցումը, փաստորեն կենտրոնանում է հիմնականում մայրաքաղաքի վրա, ինչն առավել մեծացնում է բնակչության զանգվածային կենտրոնացումը Երևանի շուրջ, որտեղից եւ՝ արտագաղթի եւ՝ թե՛ հեռավոր գյուղական բնակավայրերի դատարկման գործընթացների արագացումն ու շարունակականությունը: «Չարգացման» նման ուղի ընտրած երկրին բնակչություն առանձնապես պետք չէ, նման երկրին պետք է կարոտախտով տառապող հարուստ սփյուռք եւ տեղում այդ կարոտախտն սպասարկող «անձնակազմ», որին կից՝ իրենց արտագաղթած բարեկամներից ստացած դրամով սեփական գոյությունը պաշտպանող զանգված:

Բայց արդյո՞ք նման բեմագրով ընթացող «զարգացումը» կենսունակ է երկարաժամկետ առումով:


Պատասխանը՝ միանշանակորեն բացասական է:

Կենսունակ չէ՛, քանի որ «հին» սփյուռքը՝ մեծ եղեռնից մազապուրծ եղած հայությունը, որն իր ստացած հայրենասիրական դաստիարակության ուժով այս բեմագիրը սնուցանող ակունքներից մեկն է, աստիճանաբար, բնական ճանապարհով, անհետանում է՝ ձուլվում-մահանում:

Կենսունակ չէ՛, քանի որ «հին» սփյուռքը համալրող «նոր» սփյուռքը՝ Հայաստանից հետխորհրդային շրջանում գաղթած հայությունը, արտագաղթի կամովին դիմելու, ստացած ապագային կրթության, հայրենիքում տարբեր տեսակի զրկանքներ կրելու հետեանքով, այլ պատճառներով, ճնշող մեծամասնությամբ այլեւս չի տառապաում «հին» սփյուռքին հատուկ՝ հայրենիքի համար ինչ-որ գործնական բան անելու մղում հաղորդող կարոտախտով:

Կենսունակ չէ՛, քանի որ Հայաստանում ընթացող ժողովրդագրական գործընթացների բերումով, երկրի նվազող բնակչության թվի համեմատ, «նոր սփյուռքի» համալրումն էլ օրեցօր նվազում է:

Կենսունակ չէ՛, քանի որ Թուրքիայի եւ Ադրբեջանի Հայաստանը մեկուսացնելու ջանքերն արդեն իսկ տալիս են իրենց պտուղները՝ կառուցվել եւ շահագործման են հանձնվել Հայաստանը շրջանցող Բաքու-Չեյխան նավթատարը, Բաքու-Էրզրում գա-



գատարը, 2007թ. փետրվարին ստորագրվել է Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցման համաձայնագիրը, որի շինարարությունն արդեն սկսվում է ...

Կենսունակ չէ՛, քանի որ տարածաշրջանում ընթացող գործընթացները հղի են նորանոր մարտահրավերներով, որոնց դիմագրավելու համար Հայաստանից պահանջվելու է շատ ավելի մեծ ժողովրդագրական ներուժ, քան այսօր առկա է:

Կենսունակ չէ՛, քանի որ Մերձավոր Արևելքը, որը նախկինում ամբողջ սփյուռքի մտավոր-քաղաքական կենտրոնն էր, ինչպես նաև՝ նրա գենոֆոնդի վերարտադրության աղբյուր, հետզհետե գործվում է ռազմական անկայունության անդունդը:

Կենսունակ չէ՛, քանի որ հայերի համար արտագնա աշխատանքի հիմնական երկրում՝ Ռուսաստանում օրեցօր ուժգնանում է ազգայնամոլության ալիքը, ինչի հետևանքով ազգային հողի վրա սպանությունները դարձել են սովորական երեույթ: Ինքը՝ ժողովրդագրական խնդիրներ ունեցող Ռուսաստանը, վերջին տարիներին կտրուկ կերպով զարկ է տվել օտարերկրացիների՝ այդ թվում նաև՝ հայերի հպատակագրման գործընթացներին, ինչն, անշուշտ, արագացնելու է Ռուսաստանում բնակվող հայերի ձուլումը, մանավանդ, որ այդ երկրում կազմակերպված հայկական լուրջ համայնք գոյություն էլ չունի:

Հայաստանի աշխարհագրական դիրքը կանխորոշում է իր ապագան: Ի տարբերություն մոլորակի վրա գտնվող բազմաթիվ երկրների, որոնք շատ լավ էլ գոյատևում են որպես զրոսաշրջիկներին սպասարկող կոլոնիաներ, մեր երկիրը կամ պետք է դառնա ժողովրդագրական վերարտադրության դրական ներուժով օժտված, կայացած պետություն, կամ անհետանալու է երկրագնդի երեսից:

Միայն ժողովրդագրական անդունդից դուրս գալու ճանապարհով մենք հնարավորություն կստանանք համարժեք կերպով դիմագրավելու մեզ սպառնացող մարտահրավերներին, հնարավորություն կստանանք ստեղծելու որոշակի երաշխիքներ այս զգայուն տարածաշրջանում մեր հետագա գոյատևումը, վերապրումն ապահովելու համար:

Գոյություն ունի երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավման երեք հիմնական բաղադրիչ՝ արտագաղթի ծավալների կրճատում, ծնելիության խթանում եւ ներգաղթ՝ հայրենադարձություն: Եթե առաջին երկու բաղադրիչներն այսօր գտնվում են հասարակական քննարկման ոլորտում, ապա նույնը չի կարելի ասել հայրենադարձության մասին: Մինչդեռ, հայրենադարձության իրականացման հրամայականն ունի համազգային կարելորություն, քանի որ այն անմիջականորեն առնչվում է սփյուռքի ճակատագրին: Հայրենադարձության միջոցով ոչ միայն հնարավոր է հաղթահարել ներքին ժողովրդագրական խնդիրները, այլև արտերկրի հայության որոշակի մասին փրկել անխուսափելի ձուլումից:

Հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները պետք է կառուցել հենց այս՝ սփյուռքն անխուսափելի ձուլումից փրկելու, արդեն իսկ ուժացման ճամփան բռնած հայերի հայկական էթնիկական ինքնության վերականգնման հրամայականների տրամաբանությունից ելնելով:





Հայրենադարձության գաղափարն իր մեջ չի պարփակում միայն Հայաստանի տարածք աշխարհասփյուռ հայության վերադարձ, բնակության հաստատում:

«Հայրենադարձություն» եզրի տակ հարկ է ներառել հետևյալ երեւոյթները եւս.

➤ Հայաստանաբնակների մոտ հայաստանակենտրոնության, հայրենիքում ամրանալու խորը գիտակցության ձեւավորումը, ինչն, ըստ էության, հոգեբարոյական հայրենադարձություն է:

➤ Սփյուռքահայության եւ սփյուռքյան հասարակական կառույցների հայաստանակենտրոնության ձեւավորումը. պետք է ձգտել, որպեսզի Սփյուռքում բնակվող հայն իր առօրյա աշխատանքներով եւ հոգսերով հնարավորինս սերտորեն կապված լինի Հայրենիքի հետ: Սա առաջին հերթին ենթադրում է սփյուռքյան կառույցների եւ անհատների տնտեսական ներդրումների եւ ծրագրերի կենտրոնացում եւ ուղղորդում դեպի Հայրենիք, ինչպես նաեւ Հայրենիքի հետ մտավոր, գիտակրթական եւ մշակութային մասնագիտական կապերի ամրապնդում: Հայաստանակենտնությունը, հասկանալի է, նպաստելու է մեր երկրի հզորացմանը, բայց այն ինչ-ինչ չափերով նաեւ դանդաղեցնելու է Սփյուռքի վախճանը:

➤ Հայրենադարձություն է նաեւ պատմական Հայաստանի տարածքում ապրող, սակայն իրենց ազգային գիտակցությունից ստիպողաբար կամ ինքնաբերաբար զրկված զանգվածների վերադարձը դեպի ազգային գիտակցություն:

«Երկիր» միությունն իր ստեղծման օրվանից ձգտում է օժանդակել հայրենիքում ժողովրդագրական խնդիրների լուծմանը եւ համապատասխան ծրագրեր է իրականացնում Արցախում, ՀՀ-ում եւ վիրահայության շրջանակներում: Այդ ասպարեզներում էլ ամրացնում է ռազմավարական բնակավայրերը, պեղումների միջոցով խորացնում ազատագրված տարածքների մշակութային նշանակությունը ազգային գիտակցության մեջ, առավել եւս խթանելու համար այդ տարածքների վերաբնակեցման անբավարար ընթացքը:

«Եզերքի» այս համարով, մենք ցանկանում ենք այս անգամ արդեն շեշտադրել պատմական Հայաստանի տարածքում ուժացած հայության վիճակն ու ինքնության վերականգնման հեռանկարները: Սա ոչ միայն հայոց վերականգնված պետականության ուղղակի պարտականությունն է, այլ նաեւ մեր երկրի անվտանգության գլխավոր գրավականներից մեկը:



Չազաների մեջ ապրող հայերի, համշենահայերի, ծպտյալ հայերի եւ ուծացման անդունդում հայտնված այլ հայ զանգվածների մոտ ծրագրերի առաջնային ուղղվածությունը ուծացած հայի մոտ իր էթնիկական պատկանելության խորը գիտակցության ձեւավորումն է: Այդ առումով շեշտը պետք է դրվի առաջին հերթին իր բնիկ էթնիկական պատմական հիշողությանը նրան գիտակից դարձնելուն: Մեր խորին համոզումով, լեզվական, սովորույթային, նույնիսկ կրոնական եւ այլ տարբերությունները չպետք է խոչընդոտեն հայ լինելու գիտակցության ձեւավորման գործում: Բնականաբար, պետք է նաեւ ապահովել եւ հասու դարձնել իր հայ լինելու գիտակցությունը վերականգնած ցանկացած անհատի համար հայ ինքնության տարրերը յուրացնելու հնարավորությունները՝ լեզուն սովորելը, հայ մշակույթին եւ պատմությանը հետագա հաղորդակցումը, ավանդական հավատքի վերականգնումը, եւ այլն:



Մեր նպատակն է տեսական եւ վերացական հարթությունից այս խնդիրը տեղափոխել ազգային ծրագրի գործնական դաշտ: Ինչպես ժողովրդագրական համադետի հետ առնչվող այլ հիմնահարցերի պարագայում, «Երկիր» միությունը ցանկանում է այս խնդրին եւս հաղորդել համապետական եւ համազգային հնչեղություն՝ հրավիրելով դրա նկատմամբ հայրենի պետության ու ամբողջ հայության ուշադրությունը:  $\Delta$

